ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 773, www.court.am

№ ԴԴ-3-Ե-4560

« 16 » հունիսի 2023թ.

ԷԴՄՈՆԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՎԱՀԵԻ Ա/Ձ-ԻՆ

Սույնով ծանուցվում է, որ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգով Դատական դեպարտամենտի կարիքների համար կենցաղային և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 2023թ. հունիսի 01-ի որոշմամբ 1-ին, 6-րդ չափաբաժինների մասով Էդմոնդ Հովհաննիսյան Վահեի Ա/Ձ-ն հայտարարվել է ընթացակարգի ընտրված մասնակից:

Ընթացակարգի 1-ին, 6-րդ չափաբաժինների մասով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, eauction.armeps.am համակարգի (այսուհետ՝ Համակարգ) կողմից սահմանվել է անգործության ժամկետ. «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32 րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով անգործության ժամկետի ավարտի օր է համարվել 2023թ. հունիսի 12-ը: Հիշյալ անգործության ժամկետում չի բողոքարկվել պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Տեղեկացվում է, որ կնքվելիք պայմանագրի նախագիծը ներկայացվում է Համակարգի միջոցով և առաջարկվում՝ սույն ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված պայմանագիրը կցել Համակարգ, իսկ որակավորման և պայմանագրի ապահովումների բնօրինակները պատվիրատուին ուղղված ուղեկցող գրությամբ ներկայացնել Դատական դեպարտամենտ (հասցե՝ ք. Երևան, Կորյունի 15/1):

Որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացվում են Ձեր կողմից միակողմանի հաստատված հայտարարությունների՝ տուժանքների («ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-23/17» ծածկագրով ընթացակարգի հրավերով ներկայացված օրինակելի ձևերին /համապատասխանաբար Հավելված 3.2, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900008000664 և Հավելված 4.1, որում «Շահառուի հաշվի համարը» լրացվում է՝ 900005000758/ համապատասխան) կամ կանխիկ փողի ձևով (Կանխիկ փողի ձևով ներկայացված որակավորման ապահովումը պետք է փոխանցվի Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված «900008000698» գանձապետական հաշվին, իսկ պայմանագրի ապահովումը՝ «900008000664» գանձապետական հաշվին):

Որակավորման ապահովման չափը հավասար է գնվելիք ապրանքների գնման գնի 15 տոկոսին, իսկ պայմանագրի ապահովման չափը կազմում է գնման գնի 10 տոկոսը:

Վերոնշյալ ժամկետում անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ ԱՐԵՆ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Կայք՝ «ԴԴ ԷԱՃԱՊՁԲ 23/17» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Ա. Խաչատրյան
Հեռ.՝ /+374410/ 511 787, 511 788